ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2026 **թվականի** N 3062-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑԻ N 31 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ N 9 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի N 31 հասցեի շենքի N 9 հասցեի բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանին (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2376805 վկայական):

Քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանի կողմից լիազորված անձ Մանուշակ Գևորգյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին, սեփականության իրավունքով Աննա Գագիկի Գևորգյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի N 31 հասցեի շենքի N 9 հասցեի 65,98 (վաթսունհինգ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես առևտրի սրահ փոփոխելու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանի կողմից լիազորված անձ Մանուշակ Գևորգյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականի հունիսի 25-ին N 10702 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Փոփոխել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Չարենցի փողոցի N 31 հասցեի շենքի N 9 հասցեի 65,98 (վաթսունհինգ ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակարանի նպատակային նշանակությունը բնակելիից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը, որպես առևտրի սրահ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Աննա Գագիկի Գևորգյանի կողմից լիազորված անձ Մանուշակ Գևորգյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

2026-01-23 10:20:49 GMT+4

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թվական, քաղաք Գյումրի